ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ
«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» թեմայով ատենախոսությունը համարձակ փորձ է իմաստավորելու ամերիկյան գրականության ներկայացուցիչ Ջեք Լոնդոնի ստեղծագործությունը նորովի՝ ամերիկյան նեոռոմանտիզմի համատեքստում: Մարիամ Հակոբյանի ատենախոսության թեման **արդիական** է, քանի որ Լոնդոնի ստեղծագործությունների բովանդակային կիզակետում այն խնդիրներն են, որոնք գլոբալիզացված քաղաքակիրթ աշխարհում անմիջականորեն առնչվում են մարդկության ճակատագրին:

Թեկնածուական ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ Ջեք Լոնդոնը՝ որպես նեոռոմանտիկ գրող, մինչ այժմ համակողմանիորեն ուսումնասիրված չէ, նրա նեոռոմանտիկ աշխարհահացքի մասին վերլուծություններ գրեթե չկան, և հեղինակի արձակում նեոռոմանտիկական տարրերի առկայության վերաբերյալ հիշատակում արվել է եզակի գիտական հոդվածներում:

Ատենախոսի հեղինակն իր աշխատանքում հետապնդում է երկու **նպատակ.** բացահայտել նեոռոմանտիզմի հիմնական առանձնահատկությունները և ուսումնասիրել ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները՝ վերլուծելով Ջեք Լոնդոնի դերը ամերիկյան նեոռոմանտիզմում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է **«Ամերիկյան նեոռոմանտիզմի առաջացման նախադրյալները»**, նվիրված է նեոռոմանտիզմի առաջացման, պատմության վերլուծությանը, ինչպես նաև անդրադարձ է արվում տարբեր գրականություններում նեոռոմանտիզմի դրսևորումներին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մարդ-բնություն-քաղաքակրթություն շղթան Ջ. Լոնդոնի նեոռոմանտիկական ստեղծագործություններում»** գլուխը նվիրված է մարդ - կենդանի փոխհարաբերություններին, բնություն - քաղաքակրթություն առնչությանը նեոռոմանտիզմի գեղագիտության շրջանակներում: Ներկայացվում է

բնության գեղագիտությունը Ջ.Լոնդոնի Հյուսիսային պատմվածքներում, բնապատկերի գեղարվեստական գործառույթը տեքստում, վեր է հանվում իրավահավասարության և հումանիստական արժեքների թեմատիկան Հարավային պատմվածքներում, ինչպես նաև ներկայացվում է բնություն-քաղաքակրթություն հակադրությունը որպես նեոռոմանտիզմի գեղագիտության դրսևորում՝ հերոսների «փախուստը» հասարակական կյանքից դեպի բնություն, վերադարձը բնության նախասկիզբ, ինքնության վերագտնումը բնության միջոցով:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Բացառիկ հերոսի նեոռոմանտիկական մեկնաբանությունը Ջեք Լոնդոնի վեպերում», նվիրված է բացառիկ նեոռոմանտիկ հերոսի վերլուծությանը Ջ. Լոնդոնի **«Լուսնի հովիտ», «Երկաթե կրունկ», «Ծովագայլը» վեպերում**, քննվում է **«Զսպաշապիկը» վեպում** նկարագրվող ճամփորդությունը՝ որպես հոգևոր մաքառման, իրականությունից փախուստի, ազատության հասնելու միջոց: **«Մարտին Իդեն» և «Մեծ տան փոքրիկ տիրուհին» վեպերում** ներկայացվում է մահվան փիլիսոփայությունը որպես ազատագրման միջոց, ինչպես նաև խորն անդրադարձ է արված Լոնդոնի վեպերում կին կերպարներին՝ նշելով, որ հեղինակն առաջարկում է *«նոր կնոջ տեսակ», «նոր կնոջ հայեցակարգ», «կանացիության»* նոր դրսևորում:

Ատենախոսության առավելություններից է ուսումնասիրության գիտական նորույթի և արդիականության հստակ ձևակերպումը:

Դրվատելի է նաև, որ ատենախոսության համապատասխան գլուխներում ներկայացվում են ռեալիզմի, ռոմանտիզմի, նատուրալիզմի և նեոռոմանտիզմի ժանրային առանձնահատկությունների համեմատությունը և այդ ժանրերի առանձնահատկություններով պայմանավորված այն որոշիչ հատկանիշները, որոնք ազդել են վեպերի կերպարային համակարգի վրա:

Ատենախոսության **Եզրակացություն** բաժնում ներկայացված են այն հիմնական դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է հաշվի առնել գիտական հետագա գործունեության ընթացքում:

Մասնավորապես՝

1. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը մանրամասներ ամերիկյան նեոռոմանտիզմի յուրահակությունները, քանի որ ատենախոսության մեջ բազմիցս նշվում է, որ ամերիկյան նեոռոմանտիզմը հակասական է և հստակ սահմանում չունի:

2. Ատենախոսին կառաջարկեինք առավել մանրամասն ներկայացնել Ջ. Լոնդոնի և ամերիկացի գրող Օ.Հենրիի ստեղծագործությունների միջտեքստային առնչությունները, քանի որ Օ. Հենրին նույնպես անդրադարձել է սոցիալական արդարության թեմատիկային, որի մասին նշվում է ատենախոսության էջ 3-ում:
3. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում են ընդհանրական եզրահանգումներ, կրկնվող մտքեր, սակայն դրանք էական ազդեցություն չունեն աշխատանքի ընդհանուր բովանդակության և գիտական արժեքի վրա և զուտ խմբագրական խնդիր են:

Նշված նկատառումները չեն նսեմացնում ատենախոսի կատարած ուսումնասիրության գիտական արժեքը, ավելին, դրանք մատնանշում են թեմայի ավելի խորը քննության հնարավորություն:

Սեղմագրում ներկայացված դրույթները և տպագիր աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Այսպիսով, ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ *«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»* թեմայով ատենախոսությունը բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Վերը նշվածը հնարավորություն է տալիս միջնորդել Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի՝ 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդին՝ **ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ *«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»*** Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» թեմայով ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Կարլեն Մատինյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կ. Մատինյանի ստորագրությունը հաստատում եմ
Հայ-ռուսական համալսարանի գիտական քարտուղար
24.06.2025